

## Ա. Թ ՄԱՅՐԻ Կ Ս

Ես զլուխը բարձրը բընել սովոր եմ,  
Կամքս ալ հաստատ է, 'ոչ ոչ դիւրաւ կը հակի.  
Թէ արքայն իսկ ինձի նայի շշտակի,  
Աչքս ի խոնարհ երեք պիտի չըկորեմ:

Բայց, անուշ Մայր, պարզ ու յայտնի ըստ  
Աս սէզ սրտովս որչափալ շատ փրանամ, [թեզ.  
Խոնարհ երկու մ' իս կը պատշ շատ անգամ՝  
Երբ գիտնամ թէ քաղցրիկ գէմովով իմ քովս եւ:

Հոգի՞ն է որ զիս կը նուաճէ լըռելեայն,  
Քու վեհ հոգի՞ն որ կը զրնէ ամէն բան  
Եւ դէս յերկին կը խոյանայ բոցանման.

Թէ յիշատակն իմ ըրած շատ մը գործոց  
Զիս կը տանջէ՝ որք վիշտ եղան քու կործոց,  
Կուրծքն ազնիւ՝ որ կը սիրէ զիս ի խորոց:

ՀԱՅՆԸ

ԵՌՅԱ

❖ ❖ ❖ ❖ ❖

## Ա Ռ Ա Կ

Ա.ՈՒ.Ի.ԾՆ ՈՒ ԵՐԿՈՒ ՑՈՒՆ.ԵՐԾՈՒ

Խոյացաւ առիւծն երկու ցլուց վըրան.  
Սորա միասին եկան, միացան,  
Կող կողի տուին մէկ մարմին եղան,  
Եղջիւրնին իրենց ասպար և վահան  
Ամրակուռ ըրին, չփողին որ ոսիսն  
Իրենց մէջ մըսնէր, ու մըխուէր ի կողն:

Առիւծըն յայնժամ գիմենց նենզութեան.  
Երկուուն մէկուն փրափլսաց մի բան.  
Ես քեզ, ասաց, չեմ տար և ոչ մի զեան.  
Խաչ որ կ'ըլլամ քեզ անկեղծ բարեկամ,  
Եւ տամ քեզ բարիս, զոր ինչ կամնաս,  
Հերիփ է որ գուն ջոկուիս, հեռանաս,  
Թողլով ընկերըդ ինք իրեն զըլխուն:  
Եւ ցուլն հեռացաւ ընկերէն խսոյն:

Այն ինչ որ, բայց, մին միւսէն զատուեցաւ,  
Առիւծն երկուուն ալ բըզբանէց դիւրաւ:

Զուգութիւնն է մայր բարեաց,  
Անզուգութիւն ծնող չարեաց:

Լ.Օ.Մ.Մ.Ա.Ն.  
Նարոյի 1909

Աստիս Եազգանաւ

## ՑԱՐՈՒԹԱՆՑ ԿԵՆԱՆՔԸ

Արշալոյարն իր ցոլքեր լուսաշղող  
Կը ցանէր դէպի աշխարհ մըթասցօղ.  
Բընութիւնն համայն երգէր օրօրներ՝  
Կեանըիս ապաքչն անհուն վշտակիր.  
Երազս ծիրանի կ'երթայ կը սուզի...  
Անհունութեան մէջ անհուն խաւարծի:

Մըփանըներն ահեղ դէպ' գուրս կը ժայթ-  
թին,  
Ուր կը տատանի կեանցը գերրուկին.  
Ո՛հ, կ'ուզեմ խոյս տալ, խսպառ հեռանալ  
Անյազ ճիրանէն մահուան ցուրտ մըուայլ,  
Վայր մը, ուր ըըշած բախտը սպասում  
Լարրիւնթու գոզցես կեանըի անպատում:

Հոն, հեռուն, աղու ձայն մը գեղջկական  
Թըրթըսուար հովի գգուանցէն, գար ման՝  
Գալարուելով դէպ շաւդէ փըշալի...  
Լուսաշղող արփին կ'երթայ կը մարմրի,  
Յուսոյ հորիգոնն հուսկ կը խաւարի...  
Սըփուելով խորին մթութիւն կեանցի:

Թըրունիկներ մատղաշ թեթեաթըռիչ  
Ուզու ճոռուղնով, գեղգեղով մթովիչ  
Կը համասցիւն գորովալից սէր՝  
Դէթ ըսփոփելու ցաւատանջ սրտեր.  
Յաւէտ տողորուած յուսով մ'անթառամ՝  
Մ'ան զայի անդուլ օրը տարաժամ:

Կեանցն ալեկոծուի յուսով վարդագոյն.  
Ուազ, յոյսերն են տարտամ անկայուն.  
Երազս ծիրանի կ'երթայ կը սուզի...  
Անհունութեան մէջ անհուն խաւարծի.  
Ո՛հ, տարտամ, ջլապինդ կեանցը գերրու-  
կին:  
Հուսկ կը յանձնուի անողոց բախտին:  
Գանիիր 804.Ս.Ֆ ՄԸՄՄԼԵԱՆ